

Է. Պետրոսյան

ԿԼԱՍԻՑԻԶՄԻ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ
ԿԱՊԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Հայ ժողովրդի կյանքը, նրա հերոսների կերպարները նյութ են հանդիսացել արևմտա-եվրոպական մի շարք գրողների ստեղծագործությունների համար: Գոլդոնի, Տիրսո Դե Մոլինայի, Սկառոնի, Մոլիերի, Կերիլիոնի, Կոռնելի, Ջ. Մորիերի, Ա. Դյումայի, Հ. Բորղոյի, Մ. Բարեսի, Ռենե Դ'Ասաարակի, Է. Վերհարնի և այլ բազմաթիվ գրողների մոտ կարելի է հանդիպել հայ կյանքի ու նրա ներկայացուցիչների առավել կամ նվազ ծավալուն վերարտադրությանը:

Վեսելովսկին իր «Կոռնելը և հայերը» սքանչելի աշխատության մեջ նշում է. «...խիստ ուշագրավ է արդեն այն մի փաստը, որ Կոռնելի մի քանի ստեղծագործություններում հանդես են գալիս հայ ժողովրդի ներկայացուցիչները, որ XVII դարի Ֆրանսիացի հանդիսականները բեմից կարող էին լսել հիշատակություններ հայերի և նրանց ղեկավարների մասին, այն ժամանակ, երբ եվրոպական մյուս պետություններում ոչ ոք չէր մտածում հայերի մասին»:

Հայ գրականությունը միշտ բարձր է գնահատել արևմտա-եվրոպական գրականության լավագույն արտադրանքները: Գրական ուղղությունները արձագանք են գտել հայ գրական քննադատության մեջ:

Շատ ղեկավարում հայ կուլտուրան ներշնչման նոր աղբյուր է հանդիսացել օտար գրողների համար: Ֆրանսիացի հայտնի գրող Լամարտինը Փարիզում Սամվել-Մուրադյան դպրոցի տարեդարձի առթիվ 1848 թվականին արտասանած իր ճառում ասում էր.

«J'ai déjà eu le bonheur, une fois, dans une autre contrée, de visiter avec le même intérêt, avec le même recueillement et la même espérance, une colonie d'Arménie, dans cette île de Saint-Lazare, près de Venise, dont Lord Byron, le grand poète anglais, m'avait pour ainsi dire montré le chemin, et où il avait si souvent lui-même recueilli et éclairé sa belle imagination aux lumières de votre littérature»...

«...Jamais, à aucune époque, l'étude réciproque de votre belle langue arménienne pour les français, de la langue française pour les arméniens, ne fut aussi utile, je dirais même aussi indispensable aujourd'hui, car étudier tout ce qui se passe depuis cinquante ans dans le monde, ce qui se passe en occident, ce qui se passe en Orient, y eut-il jamais, je vous le demande, une plus grande masse d'idées utiles à échanger entre les hommes?»¹

¹ «Кавказский Вестник», 1902 г., № 7.

² Discours prononcé par M. de Lamartine à l'inauguration du collège Samuel-Mourat, page 15.

Եվ իսկապես, Բայրոնը, որ 1816—18 թվականների ընթացքում ապրելով Վենետիկում Միլիթարյանների մոտ, երկար ժամանակ ուսումնասիրել է հայերեն լեզուն, շատ բարձր է գնահատել հայ լեզուն և կուլտուրան։ Ավգերյանի հետ Բայրոնը կազմել է անգլիերեն-հայերեն, հայերեն-անգլիերեն դրականությամբ և բառարան։ Երկրորդ ֆերականության մասին նա հիշատակում է 1817 թվի հունվարի 2-ին պարոն Մըրրիին գրած նամակում։

„Padre Paschal, with some little help from me, as translator of his Italian into English, is also proceeding in a MS. Grammer for the English acquisition of Armenian, which will be printed also when finished.“¹

Քերականության առաջաբանում Բայրոնը գրում է (անհրաժեշտ ենք համարում առաջաբանը լրիվ բերել այստեղ)։

„The English reader will probably be surprised to find my name associated with a work of the present description, and inclined to give me more credit for my attainments as a linguist than they deserve.

„As I would not willingly be guilty of a deception, I will state, as shortly as I can, my own share in the compilation, with the motives which led to it. On my arrival at Venice, in the year 1816, I found my mind in a state which required study, and study of a nature which should leave little scope for the imagination, and furnish some difficulty in the pursuit.

„At this period I was much struck—in common, I believe, with every other traveller—with the society of Convent of St. Lazarus, which appears to unite all the advantages of the monastic institution, without any of its vices.

„The neatness, the comfort, the gentleness, the unaffected devotion, the accomplishments, and the virtues of the brethren of the order, are well fitted to strike the man of the world with the conviction that, there is another and a better even in this life.

„These men are the priesthood of an oppressed and a noble nation, which has partaken of the proscription and bondage of the Jews and of the Greeks, without the sullunness of the former or the servility of the latter. This people has attained riches without usury, and all the honours that can be awarded to slavery without intrigue. But they have long occupied, nevertheless, a part of the House of Bondage, who has lately multiplied her many mansions. It would be difficult perhaps, to find the annals of a nation less stained with crimes than those of the Armenians, whose virtues have been those of peace, and their vices those of compulsion. But whatever may have been their destiny—and it has been bitter—whatever it may be in future, their country must ever be one of the most interesting on the globe; and perhaps their language only requires to be more studied to become more attractive. If the scriptures are rightly understood, it was in Armenia that Paradise was placed—Armenia, which paid as dearly as the descendents of Adam

¹ Thomas Moore, „Life of Byron“, page 335.

for that ilecting participation of its soil in the happiness of him who was created from its dust. It was in Armenia that the flood first abated, and the dove alighted. But with the disappearance of Paradise itself may be dated almost the unhappiness of the country; for though long a powerful kingdom, it was scarcely ever an independent one, and the satraps of Persia and the pachas of Turkey have alike desolated the region where God created man in his own image".¹

Ֆրանսիական կլասիցիզմի խնդիրը բազմաթիվ անգամներ արծարծվել է հայ գրականության մեջ: Դրվել են բազմաթիվ հոդվածներ և կատարվել են թարգմանություններ ֆրանսիական, իտալական կլասիցիզմի լավագույն էջերից: Վեսելովսկին այդ կապակցությամբ իր ձեռագրերից մեկում գրել է.

„Parmi les tragédies de Corneille il n'y eut de traduites, pendant une assez longue periode que Polyeucte, grace au caractere religieux de la piece et aussi a la nationalité d'un heros principal: n'oublions pas que Polyeucte, mort pour le Christ au troisieme siècle sous Déviletien, était un gentilhomme armenien de naissance. En 1902 parût dans l'organe de la congrégation de Venise „Basmaveb“ (Polyhistor) une traduction en prose de la tragédie „Nicomede“, ou nous trouvons la figure orgueilleuse et majestueuse de la princesse arménienne Laodice. 50 années plus tot, en 1852, une biographie de Corneille fut imprimée dans la même revue. Des oeuvres de Racine les Mekhitaristes traduisirent „Phèdre“ en entier—et des fragments de „Britannicus“, de „Mithridate“ et d'„Iphigénie“.²

Իհարկե, հարգելի գրականագետի նպատակը չի եղել տալ հայ թարգմանությունների լրիվ ցուցակը. կան բազմաթիվ գործեր, որոնք լույս են տեսել մինչ այդ և նրանից հետո: Ըստ 1812 թվականին Հնդկաստանի Մադրաս քաղաքում հրատարակվել է Վոլտերի «Հուլիոս Կեսար»-ի հայերեն թարգմանությունը: Իսկ Վենետիկում 1830-ական թվականների սկզբներին, ինչպես այդ երևում է Մխիթարյանների թատերական ցուցակից, բեմադրվել են ֆրանսիական կլասիցիզմի լավագույն ողբերգությունները, նրանց շարքում՝ «Պոլիկտոս»-ը, «Ֆեդրա»-ն և այլն: 1834 թվականին Մոսկվայում լույս է տեսել Ռասինի «Դոն Կիշո»-ն Սարգիս Տիգրանյանի նախնական թարգմանությամբ. գրքին կցված է մի ընդարձակ և հմուտ առաջարկ: Կորնելի «Պոլիկտոս»-ը տպագրվել է նախ 1858 թվականին, գրաբար լեզվով, և 1875 թվականին, նույնպես գրաբար՝ ֆրանսերեն բնագրով հանդերձ: 1875 թվականին իտալացի երաժշտագետ Դոնիցետտին գրել է հայկական «Պոլիկտոս»-ի երաժշտական լիբրետոյի օպերան. սակայն այսպեղ մտցված է մի փոքրիկ փոփոխություն. երիտասարդ Սեվեր Պրոկոնսուլը սիրում է Ֆելիքսի աղջկան՝ Պավլինային, բայց սա մերժելով նրա սերը, սիրում է Պոլիկտոսին, դառնում է քրիստոնյա և նրա հետ հավասարապես ընդունում նահատակությունը:³ 1863 թ. լույս է տեսնում Ռասինի «Ֆեդրա»-ն հայ-

¹ Thomas Moore, „Life of Lord Byron“, page 336—337.

² ՀՍՍՌ Պետական գրական թանգարան, Ցուց. Վենետիկում արվել, հա. 36, № 2: L'Arménie et la Culture française.

³ «Փառս», Մոսկվա, 1879, № 2.

կական աադափությամբ, Ե. Հյուրմուզի թարգմանությամբ, 1889 թ. Մխիթարյանները հրատարակում են Հ. Ա. Բազրատունու «Ճաշակ հին և նոր ոգրերգության» գիրքը, որի մեջ ղետեղված են Ռասինի «Գոթոգիտ»-ն, «Միփրդաա»-ը, «Իֆիգենիա»-ն, «Բրիտանիկա»-ը, Վոլտերի «Ալդիրա»-ը, «Մե-րոպե»-ն և այլն:

1916 թ. կրկին անգամ հրաաարակվում է, առանձին գրքով, «Նիկոմի-ղես»-ը, Հ. Ճևլալյանի թարգմանությամբ և այլն:

«Բազմավեպ»-ի էջերում 1888 թ. լույս է տեսնում «Բերթոգական արվեստ»-ը, Հ. Թագեոս Թովմաճյանի թարգմանությամբ: «Հանգես տմսո-րյա»-ն նույնպես իր 1889 թ. համարներում հրատարակում է «Բերթոգա-կան արվեստի» 1-ին երգը՝ բնութագրելով Բուալոյին որպես «բանաստեղծ-ներուն ամենեն հարգված քննադատի», հմուտ և քննասեր ոգի ունեցող հեղինակի: 1906 թ. «Մասիս»-ի էջերում կրկին հանդիպում ենք Բուալոյի երկին, 1907 թ. «Բանաստեղծական արվեստ»-ը առանձին գրքով հրատա-րակվում է Մրմրյանի թարգմանությամբ: 1919 թ. կրկին անգամ, առան-ձին գրքով, հրաաարակվում է Բուալոյի երկը Նյու-Յորքում և այլն:

Բուալոյի «Բանաստեղծական արվեստ»-ը բարձր է գնահատվել հայ գրականության մեջ որպես ընտիր և բարձր ճաշակի գործ: Բուալոն գնա-հատվել է գրականության պատմության մեջ որպես նոր էպոխա բացող: Հատկապես մեղանում գնահատվում է Բուալոյի մեծ ատելությունը գեպի անմիտները, հայ գրաքննադատների կարծիքով՝ Բուալոն օգտագործելով իր հանճարը և ուժը պատճառաբանելու արվեստի մեջ, փոքր թվացող երե-վույթներին տալիս է ճարտասանական փայլ, ցուցաբերում է բառեր շարա-հյուսելու մեծ տաղանդ, բանաստեղծության յուրաքանչյուր տողը գեղեց-կացնելու և ներդաշնակելու ուժ: Բուալոյին մեղանում բարձր են գնահա-տել այն պայքարի համար, որ նա մղել է պաճուճանքի, սեթևեթության, ճոռոմաբանության, սոփեստական իմաստակության դեմ: Նրա դատողու-թյան ուժը, սատիրան և իրոնիան իրենց փայլուն արտահայտությունն են ստացել նրա «Բրակալ» դյուցազներգության մեջ, որը նշվել է հայ քննա-դատների հոգվածներում որպես նրա լավագույն գործերից մեկը և որի թարգմանությունը լույս է տեսել 1901 թ. «Արևելյան մամուլ»-ի էջերում: Բուալոն գնահատվել է մեղանում հատկապես իր քննադատության օրեկ-տիվության համար: հայ քննադատության մեջ, սակայն, նշվում են նաև Բուալոյի արվեստի թերությունները և, հատկապես, նրա քննադատության փաղանցությունը: «Բազմավեպ»-ում ասվում է, որ «նա ծնած չէր ղղա-ցումների գեղեցկությունը երգելու համար, և ղուրկ էր բաղմաթիվ կարո-ղություններից»:

Բոսուեն ևս իր արժանի տեղն էր գտել հայ քննադատության մեջ: Ֆրանսիացի հայտնի քննադատ Լահարրը Բոսուեի մասին ասել է. «Du' un homme de gout les relise, qu' il les médite, il sera terrasse d'admiration»:

Բացասական կարծիք է հայտնում Վոլաբերը, գտնելով, որ Բոսուեի քարոզները միայն իր ժամանակին էին հարմար: Հասկանալի պատճառով, Բոսուեի ստեղծագործությունները գնահատվում էին Մխիթարյանների կողմից: Մխիթարյան գրականագետները, սակայն, տեսնում են նրա ստեղ-ծագործության առանձնահատուկ կողմերը. նրան գնահատում են իր պատ-ճառաբանությունների մեծ ուժի, մտքի բարձրագույն ձևերի ճոխության,

անբռնազրոսիկության, մտքի ճկունության, մտահղացումների հանկարծակիության և ճարտասանական գեղեցիկ ձևերի օգտագործման համար:

Հայ քննադատությունն անցյալում չի տվել կլասիցիզմի ճիշտ, բազմակողմանի մեկնաբանումը: Սակայն, եղած նյութերի հիման վրա կարելի է ասել, որ կուլտուրա-պատմական մեթոդով պրկած այդ հոգվածները ցույց են տալիս, որ այն ժամանակ, երբ եվրոպական գրականության մեջ ուսման-տիզմի և ռեալիզմի զարգացման էպոխայում մոռացության էին տվել ֆրանսիական կլասիցիզմի լավագույն արժեքները, հայերի մոտ հանդես են գալիս ուշագրավ երեւոյթներ: Ոչ միայն չի արհամարհվում կլասիցիզմը, այլև մեծարվում է որպես բովանդակալից գեղարվեստական ուղղություն: Սյն ժամանակ, երբ ֆրանսիացիք և ուրիշները սխալ կերպով այդ ուղղության անվանում էին կեղծ կլասիցիզմ, հայ գրականության մեջ մշակվում էին նրա առանձին խնդիրները և թարգմանաբար լույս էին տեսնում նրա լավագույն արտադրանքները: Կլասիցիզմը հայերի մոտ մեծ մասամբ կոչվել է դասեկանություն, իսկ կեղծ կլասիցիզմը արտահայտությունը բարբառա-տաբար քիչ է օգտագործվել:

1834 թ. «Գոթոդիա»-ի թարգմանության առաջաբանում խոսելով ողբերգության բնույթի մասին, Ս. Տիգրանյանը գրում է, որ գործողությունը պետք է լինի թախծազին, բայց ոչ անպայման արյունահեղ: Նա խոսում է ռեալիզմի հնարավորության մասին կլասիցիզմի ողբերգության մեջ. ուր աղետալի դեպքերի ներմուծումը պետք է տրվի ոչ թե պատահականորեն, այլ ըստ դեպքերի կարիքի. «...Սակայն և այնպես ոչ ամենայն ինչ աղետալի կարէ մուծանիլ յեղերբերգութիւն, ինքնախոդադութեան և սպանդի չիք ինչ տեղի անդանոր, բայց եթէ ըստ դիպաց: Եթէ թշնամի սպանանէ զթշնամի իւր, գործողութիւնդ այդ ոչ սաստիկս ծնանի ի մեզ գկարեկցութիւն, այլ միայն զխիզճ սովորական՝ յոր հարկանիմք առհասարակ ընդ մահ ամենեցուն. կամ եթէ մաղասոտ ոք վարէ, ի սպանդ զանձինն զհամանման, ոչ ներգործի ինչ ի մեզ, իբր զի չիք յայնժամ տեսանել ընդդիմադրութիւն յոր մղին յեղեռն մարդակորոյս: Արեւակցութիւն, սէր և ընկերութիւն կարի իմն նպաստեն առ յարուցանելոյ զերկու կիրս եղերբերգականս»¹:

Առաջաբանի կարևոր և ուսանելի թեզերից մեկն էլ այն է, որ կլասիցիզմի ողբերգության ստեղծումը գիտվում է որպես առաջադիմական երևույթ. «Ի խաւարամած գիշերային աշխարհածաւալ տգիտութիւն մերկացաւ, առաւօտ թատրոնական ընդ երկնոյ Իտալիոյ»:

Եթե Կոռնելի ստեղծագործության մեջ գնահատվում է իմաստի սոփոկիսյան հանգանությունը, վսեմությունը և հերոսականությունը, ապա Ռասինի մոտ գնահատվում են էվրիպիդեսյան նրբամտությունը և հոգեբանական հանճարեղ վերլուծումները: Հայերի մոտ «Գոթոդիա»-ն շատ բարձր է գնահատվել առհասարակ: Այս առաջաբանում ասվում է, որ եթե Ռասինը գրած լիներ միայն այս գործը, դա բավական էր նրա անունը հռչակելու համար: Բուալոն այդ երկի մասին ասել է՝ «ես հավատում եմ նրա գեղեցկությանը և կգա ժամանակ, երբ բոլորը կխոստովանեն այդ»:

խոսելով Կոռնելի և Ռասինի տարբերության մասին, Ս. Տիգրանյանը

¹ Ռասին — «Գոթոդիա», Թարգմ. Ս. Տիգրանյանի, 1834թ., էջ 47—48:

գրում է: «Կոնսեյ էր զերազանց իմն մտավարժեալ յամենայնի, սակայն և այնպէս չէր ինչ նա թափուր ի վրիպակաց, ի սաէպ ասեմ կիրառութեանէ վաղեմի րառից, շփոթ զրուցաց և անտեղի ճոռոմաբանութեան: Ռասին քաջ կրթէր խորշիլ ի դոցունց, պոլով միշտ զեղեցկախօս և անվթար, ոչ մերժէր երբէք առ յիրերաց զհանճար և զարուեստ, ի կիր արկեալ զմին առ զմիւսոյն փոխանակելոյ զտեղի: Ոչ այնչափ ի խնդիր ելանէր նա ամբողջով զհոգի, որչափ շարժել զայն ուժգին, ուստի և ընտրելագոյն երեւեցաւ հանդիսացելոցն, կամ լաւ ես ասել առաւել քաղցրարան և հեղահամբոյր:

Կոնսեյ մարթի նմանիլ արծուոյ, որոյ սագիկս թռուցեալ ի վեր քան զամպս թխպայոգ, անթարթ հայիցի յակն յաւուր լուսաճաճանչ, կամ որ բերկրանօք անձին դիցէ ունկն որոտընդոստ ճայթմանց ամպրոպացն փայլակնացայտ, և Ռասին՝ աղաւնւոյ որ հեծիցէ ի մէջ վարդենեաց կամ ի թաւուտս մրտոց մշտականաչաւ¹

«Բազմավեպս-ուժ 1852 թ. Ռասինի, Կոնսեյի, Կրեթիլիոնի և իտալական կլասիցիստների մասին զրված հոգվածներում Մխիթարյանները բարձր են գնահատում նրանց արժեքը: Ընդունելով Լյուդովիկոսի դարը ոսկեդեմ դար, նրանք կլասիցիստներին համարում են եվրոպական թատերական արվեստի իսկական ուսվիրանները, որոնք հանդիսանում են հին հունական գրողների աթանավոր հաջորդները և մրցակիցները: Կուլտուր-պատմական մեթոդով զրված այդ հոգվածներում կարելի է տեսնել հետաքրքիր փաստական տվյալներ: Ռասինի մոտ նրանք ես գնահատում են զգացումի լեզուն, տաղաչափության կատարյալ արվեստը: Նրանք հենվում են Վոլտերի ասույթի վրա այն մասին, որ Ռասինի ոգեբերողությունների յուրաքանչյուր էջի վրա պետք է գրել՝ «զեղեցիկ, ազդու, ներդաշնակ, վսեմ և այլն բառերը:

Նրանք, որ արվեստն ստեղծել են, ասում է Դիդրոն. միայն բնութայունն են ունեցել իբրև կաղապար. իսկ նրանք, որ այդ արվեստը կատարելագործել են, խստով դատելով, առաջիններին նմանողներն են միայն եղել. բայց դրանով նրանք դեռ հանճարեղ մարդու անողորմ չեն զրկվում, որովհետև գործերի արժեքն ավելի կատարելագործության և արդյունքի աստիճանով ենք չափում, քան թե առաջին հնարումով և հնարելիս հազթած արգելքներով: Եվ իսկապես, Դիդրոյի այս հանճարեղ ասույթը ուսանելի է և մեզ համար: Քիչ են եղել այն մարդիկ, որոնք իսկապես ըմբռնել են կլասիցիզմի երկերի արժեքը: Հայ գրականության մեջ ես երբեմն կիրառվել է «կեղծ դասականություն» ձևակերպումը: Բսկ Ա. Ջորանյանը մի քանի առիթներով խոսելով կլասիցիզմի մասին, համարում է այն կեղծ դասականություն և շատ հաճախ, ինչպես շատ տեղին նշել է պրոֆ. Ադոնցը իր «Պնշիկթաշլյան և Կյուրդ խնդիրներ» հոգվածում, շփոթում է դասականը դասականության հետ:

Ֆրանսիական կլասիցիզմի մասամբ ճիշտ մեկնաբանությունը կարելի է գտնել Ադոնցի մոտ: Ադոնցը չափազանց հմուտ, շատ ճիշտ կերպով քննադատելով Ա. Ջորանյանի «Չվարճալի գրոսանքները» և էքսկուրսները գրականության մնազավառում, որակում է նրա հոգվածները որպես «կատարյալ բարեկական խառնակություն»: Բայց ինքը ես կրկնում է շրջոց

¹ Ռասին—«Գեորգիան», թարգմ. Ս. Տիգրանյանի, 1834 թ., Մոսկվա, էջ 55:

սխալները: Նա գրում է. «Կեղծ դասական է կոչվում եվրոպական վերածննդի մեծ շրջանը, որ ծայր տվեց, որպես հակադրեցություն միջնադարյան սխալաստիկայի. նպասակ ունենալով վերականգնացնել ին հույն հոմեական քաղաքականության թաղված ավանդները: Հետևանքը փայլուն էր և ամենատարած: Հայ դրականության մեջ այն միտքը, թե կլասիցիզմը եվրոպական վերածնունդի շրջանի դրականություն է, անվերապահ կերպով արահայտվել է Ադոնցի, Արեղյանի և Վարուժանի մոտ: Ադոնցը շարունակում է. «Թողնենք ուրիշ երևույթները, գրական միտքը դարձավ և կանգնեց ին դասականության վրա, աշխատելով ընդօրինակել վաղուց մեռած աշխարհայացքի մեծ վարպետներին: Մագեց կեղծ դասականության մեծ դպրոցը» և քանի որ «դասականությունը ձևի և բովանդակության ներդաշնակություն էր և ներդաշնակությունը պայմանավորված է աշխարհայացքի կենդանությանը, ապա հիասթափումն անխուսափելի էր»:

Կլասիցիզմի հարցերով զբաղվել են նաև հայտնի գրականագետ Մանուկ Արեղյանը և արևմտահայ բանաստեղծ Դանիել Վարուժանը: 1896 թ. «Նոր դար» էջերում հանդես գալով խիստ բովանդակալից հոդվածաշարով «Դրական դպրոցներ» մասին, Արեղյանը բնութագրում է կլասիցիզմը որպես կարևոր պրական ուղղություն: Ճիշտ է, նա նույնպես գործ է ածում «կեղծ դասական ուղղություն» ձևակերպումը, սակայն իր բազմակողմանի քննության մեջ նա դրսևորում է կլասիցիզմի և՛ թերությունները և՛ նրա հիմնական դրական գծերը: Նա գրում է. «Կլասիցիզմի տարբեր են արքունիք, Տիկնաճեց սալոնները, վերածնություն և հումանիզմի ոգին», գրելով ձև է «պարզություն և ճշմարտություն»: Այնուհետև նա գրում է, որ «կլասիցիստները դիմում էին հույներին, որովհետև նրանց մոտ գտնում էին բանականը և բնականը, այսինքն հավիտենականն ու համաշխարհայինը: Նրանք պահանջում էին ձևի կատարելություն՝ իբրև նմանողության աղբյուր և բնության մեջ համաշխարհային և հավիտենականն էին ընդունում իբրև գեղարվեստի նյութ»...

Արեղյանը գտնում է, որ կլասիցիզմի երկերում պայքարում է օտարը և ազգայինը, որ կլասիցիստների հոգու մեջ երկվություն է առաջ գալիս, և նրանք հնարավոր են համարում լինել քրիստոնյա ու իրենց ժամանակի ֆրանսիացի, և գրել հեթանոսական ու հունական կամ հոմեական արվեստով: Դրա հետևանքն էլ այն է լինում, որ բանաստեղծությունը կորցնում է իր ազգայնությունն ու ժողովրդայնությունը և բանաստեղծական արվեստի մեջ իշխում է առարկայականությունը: Իսկ սահմանափակության պատճառն էլ այն է, որ կլասիցիստները ներդաշնակությունը և համաշխարհայնությունը պահելու համար ամեն մի կնճռոտություն դուրս էին հանում երկից, մասերի միջև հավասարակշռություն էին պահպանում, տպավորությունները աստիճանավորում էին. մեղմացնում և չափավորում, ոչ մի ուսույուն, ոչ մի դար ու փոս չէր թույլատրվում: Հաճելիության և հաճությանության ձևեր էին դնում մինչև անգամ այն նյութերի մեջ, որոնք ամենից քիչ են հարմար այդ բանի համար, որ երբեք ոչ մի պատճառով չթերանան դուր գալու արվեստի օրենքների մեջ: Կլասիցիզմի մյուս

¹ «Նոր դար», 1896 թ. № 185.

առանձնահատկություններ Արիդյանը համարում է նրբաբանությունն ու ճոճումարանությունը:

Դանիել Վարուժանն իր «Գրական դպրոցներ» հոդվածում, որ տպվել է Թեոդիկի Տարեցույցում 1928 թվին, խոսելով մի շարք գրական ուղղությունների մասին, կլասիցիզմի հարցում մերժում է այն սխալ տեսակետները, որոնք արտահայտվել են այդ ուղղության վերաբերյալ՝ բասականը հինցած, ծթած, տափակցած տպավորությունները և, մինչդեռ այդպես չէ՝ ... Դասականը շատ առավելություններ ունի՝ նախ իրմե կպահանջվի, որ լեզվական գիտության կատարելության հասնի. այսպես եղած են հին լատիներենը, հունարենը և մեր դրարարը, որ Խազրատունիին զրչին տակ ոչ թե ոսկե դար, այլ ադամանդյա դար բոլորեց: Հետո ժողովրդական զարգացումը կա, վերջը ձև, խորք՝ համաչափ իրար լրացնելու են, չէ թե մին մյուսին տիրապետող ըլլալով: Պետք է նաև, որ դասականի մը մեջ զարգացած ըլլան զգայականությունն ու տրամախոհությունը, ցույց պայծառությունը, ան բովանդակի խոր. անըմբռնելի մտածումներ և ձևի տեսակետով որոշ օրենքներ. հոսմեական Որագիտը՝ Ֆրանսիացիներու Բուալոյին «Իերթողական տրվեստեն» շատ զանազանություններ ունի, հետևաբար դասականությունը միջավայր-միջավայր կփոխվի ինչ-ինչ կետերով: Դանիել Վարուժանը շատ ճիշտ կերպով նշում է, որ դասականության համար ժամանակն ու միջավայրը կարևոր են, «որովհետև ամեն տեղ և ամեն դար դասական գրականություն մը չարտագրեր»:

Հայ գրականության մեջ Հ. Ալիշանը իր «Նեհարքոս և Պոլիտոս» գրվածքում տվել է շատ կարևոր նշում Կոռնելի Պոլիտոսի վերաբերյալ: Ս. Տիգրանյանը և Հ. Ալիշանը առաջինն են, որ քննության են առնում կլասիցիզմի կոնկրետ երկերը: Հ. Ալիշանը նշում է, որ Կոռնելի ստեղծագործության թերություններից մեկն այն է, որ նրա երկի հերոսներից մեկը, — Նեհարքոսը շատ շուտ է հրապարակից հանվում և հանգամանորեն ցույց չի տրվում երկու հայ հերոսների ընկերասիրությունը: Թե Ալիշանը և թե Կոռնելը երկրորդական են համարում քրիստոնեական հավատքը՝ նույնիսկ Կոռնելի «Պոլիտոսի» առաջին գործողության մեջ նկատելի է հեղինակի քննադատական վերաբերմունքը դեպի քրիստոնեության սահմանափակությունը և սխեմատիզմը: Կոռնելն ավելի շատ կանգ է առնում հերոսի կամքի ուժի վրա, իսկ Ալիշանը վերաբնակում է Պոլիտոսի և Նեհարքոսի ընկերասիրական սթանդերթի գրույցը, որը մեզ հիշեցնում է «Յ3»-ի հերոսներ Սիմուրգենի և Գովենի գրույցը բանտում:

Հայ գրականությունն անցյալում ուշադրություն է դարձնում Կոռնելի այնպիսի երկերի վրա, ինչպիսիք են «Պոլիտոսը» և «Նիկոմիդեսը»: Ապատահական չէր. այս երկերում Ֆրանսիացի հեղինակը դրսևորում է հավատարմության, անձնվիրության, հայրենասիրության և կամքի ուժի փայլուն օրինակներ: Իսկ մաքի և գրականության զարգացման մեջ ուշագրավ երևույթ է հանդիսանում հենց սերը դեպի հայրենիքը, դեպի հերոսականությունը և դեպի արվեստի կուսարելությունը:

Պատահական չէ նույնպես, որ կամքի ուժի, հերոսության, անձնվիրու-

¹ Դ. Վարուժանի զեկագումը Բեթայի Սոսյան դպրոցում 1912 թ. Թեոդիկի Տարեցույց. 1928 թ., էջ 342:

² Նույն աեղում, էջ 344:

թյան զծերը Կոռնելը համախմբել է հայ ժողովրդի ներկայացուցիչներ՝ Պոլիկոտոսի, Նեարքոսի, Լաոդիգեի, Էվրիտիկայի կերպարների մեջ: «Պոլիկոտոս»-ում քրիստոնեական հավատքի հարց է դրվում, որի մասին խոսում են վեսելավսիկն և Մ. Արեղյանը. սակայն այդ չէ երկի ամբողջ իմաստը. առաջին հերթին Կոռնելին հետաքրքրում է Պոլիկոտոսի խիղախությունը, իմաստությունը, անձնազոհությունը և հայրենասիրությունը: Ընկերասիրությունը, որն այնքան լիրիկորեն տվել է «Յուդիկ» հայրենեագրի հեղինակը Պոլիկոտոսի մասին իր գրվածքում, (ե որը պետք է համարել հայ գրականության զոհարներից մեկը) նույնպես հավատքի հարցը երկրորդական է համարում: Պոլիկոտոսի կերպարի մեջ ընդունվում է հայրենասիրությունն ու հերոսությունն է: Կոռնելի մյուս երկը՝ «Նիկոմիդես»-ը նույնպես չափազանց կարևոր է հայ կյանքի ուսումնասիրության համար: Այս գրվածքում գլխավոր հերոսուհի Լաոդիգեի կերպարի մեջ Կոռնելն ընդգծում է ազգային արժանապատվության մեծ զգացումը, հայրենասիրությունը, ժողովուրդների բարեկամության գաղափարը, ազնվությունն ու ընկերասիրությունը, գեղեցիկն իրականի հետ ներդաշնակելու գաղափարը: Բացի այդ՝ Լաոդիգեն հանդես է գալիս որպես լավ քաղաքագետ, որն ի վիճակի է քաղաքական բարդ հարցեր լուծել և այդ հարցերի շուրջը խոսել ժամանակի որևիցե հմուտ քաղաքական անձնավորության հետ: Այսպիսի երկերում նկատելի է Կոռնելի ջերմ վերաբերմունքը դեպի հայ ժողովուրդը, որի ազգային անկախության և ազատության գաղափարը նրան սիրելի է եղել: Բացի այդ՝ Կոռնելի այս երկերի դերը մեծ է հայ ժողովրդին օտարներին ծանոթացնելու խնդրում: Սակայն կա մի այլ հանգամանք. Կոռնելն իր ոգեբերությունների համար ընտրելով հայկական սյուժեներ, խիստ լայնացրել է իր ստեղծագործության սահմանները. խորտակելով կլասիցիզմի ուզոթյան ոչ միայն ձևական, այլև գաղափարախոսական սահմանափակումները: Ի հակադիմ աբսոլուտիզմին, Կոռնելը ջատագովում է ժողովրդական շարժումները, որոնք ծառայում են ժողովուրդների անկախության և ազատագրության: Այդ երկերն առատ նյութ են տալիս մեզ առավել խորը համոզումով ապացուցելու, որ Կոռնելի ու Ռասինի երկերը որոշ առումներով կապվում են վերածննդի շրջանի գրականության հետ և 18-րդ դարի գրականության համար ուղի են հարթում, այսպիսով, կարևոր աստիճան հանդիսանալով գրականության պատմության մեջ:

«Նիկոմիդես»-ում հանդես եկող հայ թագուհի Լաոդիգեն ազնվության և հպարտության մարմնացումն է. նա զայրույթով է լցվում ոչ միայն դեպի մանր պետությունները, որոնք ոտնձգություններ են անում իրար դեմ, որոնք հայ աշխարհն ուզում են ստրկացնել, այլև հատկապես Հռոմի աշխարհակալական ձգտումների դեմ: Նա պահանջում է իր ազնիվ և արդար ժողովրդի իրավունքը: Նրա հայրենասիրությունը թելադրում է նրան ժողովուրդների հավասարության և բարեկամության գաղափարը: Այս երկում նա գլխավոր հերոսուհի է և փոխադարձ սիրով կապված է Բյուսինիայի թագավոր Պրուզիասի որդի Նիկոմիդեսի հետ, որի հետ ամուսնանալով՝ մտածում է նրան դարձնել Հայաստանի թագավորը և որին պետք է պատկանի նաև Բյուսինիան՝ Պրուզիասի մահից հետո:

Կոռնելն իր առաջարկում հիշատակում է Հուսանիանոսի պատմական տվյալները: Վերջինիս 34-րդ գրքում գտնում ենք հետևյալ պատմական փաստի նկարագրությունը.

«Նույն ժամանակները Պրուդիասը, Բյուսթինիայի թագավորը, ցանկանում էր ոչնչացնել աալ իր որդուն՝ առաջ մղելու համար իր երկրորդ կնոջ ունեցած որդիներին, որոնց դաստիարակությունը վստահել էր հոռմայեցիներին: Երիտասարդ իշխանը տեղեկանում է այդ ծրագրին այն մարդկանց միջոցով, որոնք պետք է գործադրեին այդ: Նրանք ստիպում են նրան դաժան հոր հետ վարվելու նույն ձևով և հրահրում են նրան իջեցնել տալու նրա գլխին այն ոճիւրը, որ նա հղացել էր: Նա շատ հեշտ համոզվում է և գնալով իր հոր նահանգները, ուր նա հրավիրվել էր, անմիջապես հռչակվում է իրրե թագավոր: Իր որդու կողմից գահընկեց եղած Պրուդիասը մատնվում է թշվառության, լքված նույնիսկ իր ստրուկներից: Նա ապրում է խավարում, և գլխատվում է Նիկոմիդեսի հրամանով, գոհ դառնալով այն ոճիւրին, որ ինքն էր հղացել»¹ Իսկ 38-րդ գլխում գրվում է, որ Նիկոմիդեսը ծերացած, ամուսնացած էր Լաոդիդեսի հետ, որ Կապադովկիայի թագավոր Արիարաթի այրին էր: Ըստ Հուստինիանոսի՝ Լաոդիդեսն Պոնտական թագավոր Միհրդատի քույրն էր և իր կյանքն անց էր կացրել արկածներով: Նրա եղբայրը սպանել էր տվել Լաոդիդեսի ամուսնուն և այս վերջինը Նիկոմիդեսի օմանգակությամբ պայքար էր մղում իր եղբոր դեմ և, Կապադովկիան իր ձեռքում պահելու համար, դիմում էր բավականին կռաւի խորամանկությունների: Պատմական այս տվյալներն իրրե հիմք ընդունելով, Կոռնելը կատարում է մի շարք փոփոխություններ: Լաոդիդեսն Կոռնելի մոտ հանդես է գալիս ոչ որպես Արիարաթի այրին, ոչ որպես խորամանկ կին, այլ երիտասարդ խելացի աղջիկ: Բացի այդ՝ Կոռնելը երկու հերոսներին նկարագրում է երիտասարդ հասակում: Սակայն կարեորագույն փոփոխությունը հանդիսանում է այն, որ Լաոդիդեսն, որ ըստ պատմական տվյալների Կապադովկիայի թագուհին է, Կոռնելի ստեղծագործության մեջ Հայաստանի թագուհին է: այդպիսով Կապադովկիան փոխարինվել է Հայաստանով:

Փրանսիացի հայագետ Ֆերդինանդ Հերոլն այդ մասին գրում է, որ Կոռնելը ճիշտ է մատնանշում պատմական ժամանակաշրջանը, բայց տեղի խնդիրը նա այլ կերպ է դասավորում, քանի որ, ասում է Ֆ. Հերոլը, Բյուսթինիան հռչակավոր երկիր չէր, իսկ Կապադովկիան նույնպես չա՞ռ ծանոթ երկիր չէր. և նա ավելացնում է. «Հայաստանը ծանոթ էր «Նիկոմիդեսի» հանդիսականներին, հռոմեական գավառ դարձած Հայաստանում էր տեղավորել Կոռնելը «Պոլիկտոսին» և իր երկու պիեսները, որոնք ժամանակակից էին նրան և որոնք խիստ տարբերվում էին նրանից, և որոնք ապացուցում են, որ այն ժամանակ թատրոնում ազատ կերպով կարելի էր խոսել Հայաստանի, որպես ծանոթ երկրի մասին... Հայաստանը 17-րդ դարում ժողովրդականացած էր դրամատուրգների մոտ և Կոռնելը մի անգամ ևս հանդես էր գալիս իրրե կարող հեղինակ, օգտագործելով այդ ժողովրդականությունը մի դարդ ևս ավելացնելու իր «Նիկոմիդեսին»²:

Շատ հավանական է, որ Կոռնելը ուսումնասիրելով Հուստինիանոսի տիեզերական պատմությունը, տեղեկություններ է քաղել Հայաստանի մասին: Այդ պատմական աղբյուրի 28-րդ գրքում պատմվում է հայոց Տիգրան

¹ Justin. Histoire Universelle, tome seconde, livre XXXIV, tome II, Paris, p. 211.

² Revue des etudes armeniennes, 1923, № 3, p. 59.

թագավորի մասին, իսկ 60-րդ գրքում ասվում է. որ «Հայաստանը տեղավորված է Կապադովկիայից մինչև Կասպից ծովը տասնը մեկ հազար մղոն տարածությամբ»¹

Մեր կարծիքով կա մի այլ պատճառ ևս, որ Կոռնելիոս մղել է իր մի շարք երկերում անդրադառնալու հայ իրականությանը: Հերոսական կերպարներ կերտող հեղինակի համար խոշոր նշանակություն ունի այն, որ Հայաստանն իրեն շրջապատող պետությունների շարքում առաջադիմականն էր, որ Հայաստանն էր, որ ամենից շատ կարիք էր ունենում պայքար մղելու հարստահարիչների ու զավթիչների դեմ, որ հայ ժողովուրդն էր, որ բարձրացնում էր ազատության և արդարության դրոշմ անեցնելով իր զավակների մեջ ջերմ հայրենասիրություն, արիություն, անձնվիրություն: Հայկական սյուլետներ մշակելով, Կոռնելը հնարավորություն է ունեցել խախտելու տիրող արվեստի որոշ քաղաքած օրենքները:

Նեկոմիդեսը-ում հայ հերոսուհի Լաոդիզի միջոցով Կոռնելը հայաստան է հետևյալը.

«Բայց կռիվներում ձեզ հաղթելու համար, ես, որ թագուհի եմ, հավաքեցի այս ըմբոստներին. պատերազմի իրավունքով միշտ թույլ է տրվել թշնամիների միջև ըմբոստություն վառել»:

«Ես երբեք չէի ցանկանա ձեր Բյուսինիային տիրել. բացեք ինձ համար միայն Հայաստանի ուղին, ես կհամբերեմ, մինչև որ վերջին գերություն շրթաները և այն ժամանակ ինձ կօգնեն մեկ միլիոն քաջերի բազուկները»²

Այսպիսով՝ անձնվիրության և հայրենասիրության թեման է, որ ոգեվորում է Կոռնելին:

Ֆրանսիական կլասիցիզմի մյուս ներկայացուցիչը՝ Կրեբիլիոնը, նույնպես իր ստեղծագործություններից մեկում՝ «Ռադամիստ և Ջենոբիա», խոսում է Հայաստանի, որպես մի ծանոթ երկրի մասին, «Նեկոմիդեսի» ներկայացումից մի տարի հետո, 1653 թվին: Այդ երկը ժամանակին նշանակալից է եղել:

Պոսպիր Ժոլիո Դե Կրեբիլիոնը, որ ժամանակակիցների կողմից հռչակվել էր որպես ողբերգության հանճար, 1705 թ. հանդես է եկել իր «Բոդմենե», 1707 թ. «Ատրե և Տիեստ», 1708 թ.՝ «Էլեկտրա» գրվածքներով, որոնցում տալիս է կյանքում տեղի ունեցող սարսափելի և ողբերգական դեպքերը — եղբայրասպանություն, որդեսպանություն, մայրասպանություն — և այս բոլորի նյութը նա վերցնում է հունական անցյալից: Երբ Կրեբիլիոնին հարց են տալիս իր թեմաների ընտրության մասին, նա ասում է. «Բժժեքին չէր ընտրությունը, Կոռնելը երկինքն էր գրավել, իսկ Ռադամը աշխարհը. ինձ այլ բան չէր նսում, բայց եթե դժոխքը և ես էլ հոգով, մարմնով ինձ նրա ժեշտեղավորեցի»³:

«Ռադամիստ և Ջենոբիա» ողբերգության նյութը ըստ երևույթին նա վերցրել է Տակիտուսից, որի պատմական երկի 12-րդ և 13-րդ գլուխներում կա մի արտասովոր դեպքի նկարագրությունը, որտեղ հանգես են գալիս Ռա-

¹ Justin, Histoire universelle, tome seconde, p. 301.

² Oeuvres de Corneille, édition variorum, Paris, 1882, page 210—211.

³ «Բազմալեզ», 1886 թ., ժ2.

դամիստը, որ Հայաստանի թաղավորն է, իր կինը՝ Ջենոբիան, և կնոջ հայրը՝ Իբերիայի թագավոր Փարազմանը:

«Ռադամիստ և Ջենոբիա»-ն արժեքավոր է մեզ համար այն տեսակետից, որ թեպետ Կրեթիլիոնը լավ չի պատկերացնում Հայաստանը և հայկական բարքերը, բայց բազմաթիվ անգամներ հիշատակում է հայերի և Հայաստանի մասին: Ըստ Տակիտոսի տվյալների, հայ ժողովուրդը ղենքը ձեռքին ապստամբում է Միհրդատի և Ռադամիստի կռիվների ժամանակ և վտարում է Հայաստանից Ռադամիստին: Այս կարևոր հանգամանքը թեև թույլ, բայց մասամբ արտահայտված է Կրեթիլիոնի մոտ:

Պատահական չէ, որ ոուս խոշոր գրող Գրիբոեդովը, որի դրական ստեղծագործությունը որոշ չափով կապվում է հայ իրականության հետ, ունի մի ողբերգության ծրագիր. դա «Ռադամիստ և Ջենոբիա»-ն է: Հանճարեղ հեղինակն իր ծրագիրը կազմել է՝ հենվելով նույն պատմական աղբյուրների վրա:

Կրեթիլիոնի մոտ Ռադամիստը հապճեպ և անզգուշ գործող մի հերոս է. իսկ Գրիբոեդովի մոտ նա լավ քաղաքագետ է և փառասեր, նա ոչ ոքի չի վստահում, միշտ շրջապատված դողացող ստրուկներով, դավաճաններով ու շահամոլներով՝ նա գործունյա է և ինքնավստահ, գիտե չափել պարագաները: Նա չի սիրում իր հորը՝ Փարազմանին, ատում է հռոմայեցիներին ու պարթևներին: Այստեղ կա մի այլ հերոս՝ Սմբատը, որն ընկերանում է Ռադամիստին: Ըստ Գրիբոեդովի՝ Ռադամիստը մի բռնակալ է և ճնշում է կովկասյան ժողովուրդներին — հայերին և վրացիներին: Այս ծրագիր-ողբերգության խոշոր արժեքն այն է, որ նրանում նախատեսվում է հայերի և վրացիների միահամուռ պայքարը և ապստամբությունը բռնակալ Ռադամիստի դեմ: Հանդես է գալիս ժողովուրդը, ցույց են տրվում պայքարի միջոցները և այլն: Այս վերջին գիծը մասամբ երևում է նաև Կրեթիլիոնի սանդաղագործության մեջ, որի առանձնահատուկ կողմն այն է, որ վիպական պատմողական ողբերգության մեջ ներմուծվում է լիրիկան, որով հաճախ թուլացվում է դրամատիզմը: Զգացումները մեծ տեղ են գրավում, բայց չեն հասնում ոասինյան զգացումների բազմակողմանիության:

«Ռադամիստ և Ջենոբիա» ողբերգության համար Կրեթիլիոնը արժանացել է մեծ գովեստների, և մեկ շաբաթվա ընթացքում ողբերգությունը տպագրվել է երկու անգամ: Այդ երկի դեղարվեստական արժեքներից մեկն այն է, որ այնտեղ տրվում է կրքերի խոր, ճշմարտացի, վառ վերարտադրությունը: Հուզիչ է Ջենոբիայի արկածալից կյանքը, Ռադամիստի և Փարազմանի կերպարները բնական են: Կրեթիլիոնը ցուցաբերում է մտքի նրբություն և տալիս է մի քանի գեղեցիկ տեսարաններ: Հատկապես հաջող է տրվում Ռադամիստի և Ջենոբիայի իրար ճանաչելու տեսարանը: Հ. Այամդարյանի «Ռադամիստ և Ջենոբիա»-ն (համաձայն իմ ունեցած ոչ լրիվ նյութերի) ղխավորապես ուժեղ և քնքուշ սիրո զգացումների դրսևորում է:

Ինչպիսիք բացատրել այն հանգամանքը, որ մինչդեռ կլասիցիզմի դարն անցել էր նվրոպայում և հանդես էին եկել այնպիսի գրողներ, ինչպիսիք են Վ. Հյուգոն, Ստենդալը, Բալզակը, Ֆլորբերը, — հայ դրականության մեջ բազմաթիվ անդամներ արծարծվում է կլասիցիզմի հարցը:

Մնդիրն այն է, որ կլասիցիզմի երկերում հանդես եկող ուսցիոնալիս-

տական սկզբունքը, կենտրոնացած պետականության գաղափարը սիրելի է եղել դարերի ընթացքում իր անկախության և ազատության համար պայքարող հայ ժողովրդի համար: Երանցում ընդգծվող կարգապահության, ազդային հպարտության, և հասարակության և անհատի փոխադարձ կապի ու ազատության գաղափարը որոշ առումով հարադաս է եղել ժողովուրդների իրավահավասարության և ստեղծագործական աշխատանքի ձգտող հայ ժողովրդի համար:

Կլասիցիզմի արվեստը բնութագրելով հայ գրաքննադատությունը գնահատել է Կոռնելին՝ նրա հերոսական կերպարների համար, երբեմն նախապատվությունը տվել է Ռասինին՝ նրա հերոսների հոգեբանության խորը և քաղաքական վերարտադրության համար, ինչպես այդ մասին վկայում է Ս. Տիգրանյանը:

Թե Կոռնելը և թե Ռասինը ընտրում են կամքի մեծ ուժով և իմաստությամբ օժտված հերոսների, դիմելով պատմության այն շրջանին, երբ հնարավոր էր այդպիսի դժերի դրսևորումը: Պատահական չէ, որ ժամանակակից դրող Ռոմեն Ռուանը դիմեց վերածննդի շրջանին իր անմահ Կոլա Իրյունիոնի կերպարն ստեղծելու համար: Հայնեն ասում է, որ Ռասինը առաջին նոր պոետն էր, որի ստեղծագործության մեջ միջնադարյան աշխարհայացքը վերջնականապես խախտվում է, որ նա հանդիսանում է նոր հասարակության օրդանը և նրա կրթումը բուրումնաբեր ժամանակակից կյանքի առաջին մանուշակները: Ռուսաստանում մեծ տեղ են զբաղեցրել Կոռնելի և Ռասինի ստեղծագործությունները: Գերցենը գրում է, որ «գերմանական էսթետիկան ինչ համոզում էր, որ Ֆրանսիայում երբեք արվեստ գոյություն չի ունեցել, որ իսկապես արվեստը կարող է ծաղկել միայն Բավարիայում և Վլադարում: Այդ բանի համար էլ ես կարգում եմ Ռասինին շատ ավելի, որպեսզի լրիվ հասկանամ Բուսովուսի և Մյուլլերների ողբերգության գեղեցկությունը»¹:

Նվի էպոխայում զգացումների և բանականության միասնությունն ու հակասությունը այնքան ուժեղ չի արտահայտվել գեղարվեստական գրականության մեջ, ինչքան կլասիցիստների մոտ: Այդ երկու մոմենտներն անջատվում են Վոլտերի, Դիդրոյի և Ռուսսոյի մոտ, — առաջինների ստեղծագործության մեջ բանականության ատրիբուտներն են ընդգծվում, Ռուսսոյի մոտ՝ զգացումների ատրիբուտները: Հետագայում Ստենդալը աշխատել է կրկին միացնել այդ երկուսը: Գյոթեի, Ժորժ Սանդի, Վիկտոր Հյուգոյի, Անատոլ Ֆրանսի և Ռոմեն Ռուանի մոտ այդ երկուսը առաջ են քաշվում ոչ թե հակադրվելու, այլ համադրվելու իմաստով: Կոռնելի և Ռասինի ստեղծագործության մեջ տրվում են մարդկային զգացումների տարբեր երանգավորումները: Երկու նուրբ և իրարամերձ զգացումների հարաբերությունը նոր դյուտ է կլասիցիստների մոտ և այս տեսակետից նրանց կարելի է համեմատել Շեքսպիրի հետ: Կլասիցիստների մոտ եթե այդ զգացումները լինեն հակասական, մեկը մարդկայնորեն վեհ, իսկ մյուսը քաղաքական, ապա ողբերգության լուծումը համեմատաբար հեշտ կլինի: Ինչն այն հանգամանքը, որ շատ նուրբ զգացումների պայթարի հողի վրա է գրվում ողբերգությունը, — հայրական սեր, սեր զեպի սիրած մարդը, սեր զեպի

¹ Мокшанский, «Расси», стр. 5.

կինը և զեպի ներքին համոզումները, սեր զեպի ծնողները և զեպի հայրենիքը և կամ սիրային զգացումները և խղճի ձայնը, — այս բոլորը բարձրացնում է ոգրերգության արժեքը։ Նրանք շատ մեծ խնամքով են թաքցնում ոգրերգության լուծումը, որ տեղի է ունենում զլխավոր հերոսի գործունեության առաջ կանգնած խոչընդոտների վերացումով, 'Իրամատիգ' մի ուժղնությունը, ոգրերգության զսպվածությունը զալիս է Շեքսպիրից և կլասիցիստների միջով հետազայում դրսևորվում է Իրսենի ստեղծագործության մեջ։ Ինտրիգների ամուր կառուցվածքը կլասիցիստների մոտ, զեղարվեստական խոսքի հակերճությունը, հոգեբանական ապրումների մանրամասնությունների դրսևորումը հանդիսանում են այն արժեքները, որոնք կարևոր ներդրում են հանդիսանում զեղարվեստական խոսքի և մտքի զարդացման պատմության մեջ։

• • •

Հայ և արևմտա-եվրոպական գրական կապերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայ գրականությունն մեջ գրական ուղղությունները և ժանրերը միշտ չէ, որ հաջորդել են եվրոպականին, այլ երբեմն միաժամանակ են հանդես եկել, երբեմն ուղացած, բայց երբեմն էլ նախորդել են եվրոպականին։ Երբ Արևմուտքը զեռ նույն էր մտածում ազատագրվելու լատին լեզվի գերիշխանությունից, Հայաստանում գրաբարը տեղի էր տալիս աշխարհիկ լեզվին, որը գրական իրավունքներ էր ձեռք բերել կիլիկյան արքունիքում և աշխարհիկ բանաստեղծության մեջ։ Այն ժամանակ, երբ եվրոպայում սիրում էր 'Իանտեի, Պետրարկայի գրական ստեղծագործությունը, մեզանում հանդես էին եկել աշխարհիկ տաղասացները։ Ընդունված կարծիք է, որ կլասիցիզմը հայերի մոտ շատ ուշ է առաջ եկել, որ միայն Մխիթարյաններն են մշակել այն։ Սա հիմնովին թյուր տեսակետ է։

'Իեռ Մխիթարյաններից շատ առաջ, 17-րդ դարում, հայ գրականության մեջ կարելի է հանդիպել կլասիցիզմի նմուշներին։ Եթե կլասիցիզմը սահմանափակվենք միայն զգացումների և պարտականության գիտակցության պայքարի շրջանակներով, ապա կարելի է ասել, որ իսկապես հայկական կլասիցիզմը ուշ է առաջ եկել, մանավանդ որ այդ ուղղության զլխավոր ժանրը ոգրերգությունն է։ Հայ գրականության մեջ այդ պայքարը զրված է հավասարիքների և նոր մտքերի ու զգացումների միջև, կյանքի արհամարհանների և զեղեցկության միջև, զեղեցկի և իրականության ներդաշնակության ու հասարակական-քաղաքական անբնական, աններդաշնակ երևույթների միջև։ Այս իմաստով էլ կլասիցիզմի նմուշներին կարելի է հանդիպել մեր գրականության վաղ շրջանում։ «Մարտիրոսություն» սրբոյն Հովսեփիայի ոգրերգությունը, որը 1668 թ. ներկայացվել է Լեոպոլտում, հանդիսանում է այդ ուղղության նմուշներից մեկը։ Եվրոպական կլասիցիզմի համեմատությամբ այս ոգրերգության արմատավոր հատկանիշներից մեկն այն է, որ թեև զրարար է զրված, սակայն ժողովրդական պարզ խոսակցության տարրեր է պարունակում իր մեջ։ Իմացականության և զգացումների զեկավարման խնդիրը այստեղ զրվում է Ս. Հովսեփիայի բնավորության մեջ։ Նա մինչև վերջը պայքարում էր իր սկզբունքների համար, հանձն առնելով բազմաթիվ տանջանքներ։ Այս ոգրերգության մեջ կա նաև պատմական անձնավորություն, — սարկավազ Վարդան Հունանյան Թոխատեցին։

Ա. Բագրատունու «Հայկ Դյուցազն», Մ. Ա. Հեքիմյանի, Թ. Թերզյանի ողբերգությունները համարվում են կլասիցիզմի ուղի արձագանքները հայ գրականության մեջ՝ ֆրանսիական կլասիցիզմի օրինակների վրա գրված։ Այս տեսակետներն արտահայտվել են Դաթիվյանի ու Ուրիշների մոտ. տեսակետներ, որ այնքան էլ ճիշտ չեն։

Նման կանխակալ կարծիքները թերևս հետևանք են այն բանի, որ վերը հիշված հեղինակները չեն ուսումնասիրվել մեր գրականության մեջ։

19-րդ դարի հայկական ողբերգությունները ստեղծվել են այն ժամանակ, երբ եվրոպական գրականության մեջ ոռոմանտիզմն ու ռեալիզմը կատարել էին մեծ նվաճումներ և ձևավորվել էր ռևոլյուցիոն պոեզիան։ 1848 թվականի եվրոպական դեպքերը, անկասկած, խոշոր նշանակություն են ունեցել հայ ողբերգությունների ստեղծման համար. սակայն այդ երկերը միանգամայն ինքնուրույն գործեր են և վերարտադրում են հայ ժողովրդի պատմության կարևոր էջերը։ Եթե ֆրանսիական կլասիցիզմի երկերում պայքարում էին օտարը և ազգայինը, ապա 19-րդ դարի հայ ողբերգություններում այդ պայքարը վերանում է, որովհետև նրանք վերարտադրում են հայ ժողովրդի կյանքը, լինելով նոր էպոսայի գործեր, նրանք ունեն ռևոլյուցիոն ոռոմանտիզմի ոճի արտահայտությունը, ինչպես նաև ռեալիզմի բազմաթիվ տարրեր. իսկ հայրենասիրությունը նրանց մեջ կազմում է հիմնական գիծը։ Հայ ողբերգությունների մյուս հիմնական գիծը գեղեցկի և իրականության ներդաշնակությունն է։

Ս. Հեքիմյանի, Թ. Թերզյանի, Մինասյանի, Ա. Բագրատունու ստեղծագործություններին բնորոշ է նաև ռացիոնալիստական գիծը, որ նկատվում է շարադրության, դիալոգի, ռացիոնալիստական կառուցվածքի մեջ։ Այդ ռացիոնալիզմը, սակայն, կոնկրետ է, պատմական լիցք ունի և ծառայում է հայրենասիրական և արդարացի վրեժի գաղափարին։ Բայց ռացիոնալիզմի կողքին կա նաև պոետիկական իրրացիոնալիզմ։ Այդ հատկապես նկատելի է Հեքիմյանի «Արտաշես և Սաթենիկ» ողբերգության մեջ, Սաթենիկի երազի պատմության մեջ։ Պարտականության գիտակցության և զգացումների միջև եղած պայքարը, որը կլասիցիզմի հիմնական սկզբունքներից մեկն է, այստեղ արտահայտվում է կոնկրետ կենսական փաստերի մեջ, և այդ սխեմա չէ, այլ կենսունակ իրականության արտացոլումը։

Հեքիմյանի մոտ չափազանց գեղեցիկ է Արտաշեսի և Սաթենիկի կռիվն ու սիրո նկարագրությունը (էջ 304—307)։ Սա բացառիկ գեղարվեստական հշանակություն ունի և գյուտ է հայ գրականության մեջ։ Երկու ժողովուրդների միջև եղած թշնամանքը վերջանում է փոխադարձ համերաշխության միջով։ Այդպիսով՝ Սաթենիկի և Արտաշեսի սիրո պատմության մեջ դրվում է երկու ժողովուրդների բարեկամության գաղափարը։ Այս ողբերգության հիմնական գծերից մեկն է նաև գեղեցկի և իրականության ներդաշնակումը։

Թ. Թերզյանի «Հովսեփ Դեղեցիկը», գրված 1873 թվականին, նույնպես համարվում է կլասիցիզմի արտահայտություն։ Ժիշտ է, այստեղ կա կամքի լարման փայլուն օրինակը Հովսեփի և իր եղբայրների հանդիպման տեսարանում։ Նրանք փոխադարձաբար մոռանալով անցյալը՝ հաշտվում են։ Այդ հաշտեցումն ապացույց է սիրո զգացումների հաղթանակի. այստեղ

կրեին ընդգծվում է գեղեցկի և իրականության ներդաշնակության խընդիրը:

Հակոբ Կարենյանի «Շուշանիկը», գրված 1860 թվականին, նույնպես տալիս է կամքի լարման փայլուն օրինակ: Սակայն այստեղ, Շուշանիկի և Վարդանի պատկերի մեջ, կամքի ուժի հետ միասին ընդգծվում է նաև անձնվիրությունը: Այստեղ ևս նկատվում է լիրիկայի համատեղումը պատմողական, էպիկական ու հետ:

Հայ գրականության մեջ կլասիցիզմի նմուշներ կարելի է գտնել ոչ թե 19-րդ դարում, այլ շատ առաջ, երբ գրական ստեղծագործություններում ռացիոնալիզմի և իրրացիոնալիզմի պայքարը արտահայտվում էր իրեն պայքար հավատքի և բանականության միջև, որը հետագայում հանգում է բանականության և ազատ զգացումների ներդաշնակության: Ընչ վերաբերում է 19-րդ դարի հայ թատերգությանը, ապա այստեղ պետք է նշել այն հանգամանքը, որ հայ գրողները միանգամայն հնարավոր գտան, հենվելով կլասիցիզմի լավագույն հատկանիշների վրա, ստեղծել նոր տիպի ողբերգություն, հայրենասիրական, պատմական ողբերգություն: Այս ողբերգություններում տրվում է ոչ միայն անհատի հոգեբանության դրսևորման խընդիրը, նրա պայքարը շրջապատող աններդաշնակության դեմ, այլև ինքն իր դեմ, որը հանդիսանում է Շեքսպիրի ստեղծագործության հիմնական գիծը: Ոոսքի հակիրճությունը՝ դիալոգի և գործողության համատեղումը, բանականության և զգացումների հավասարակշռումը հաստատվում է որպես կյանքի, իրականության արտահայտություն: Եթե Ֆրանսիական կլասիցիզմը դիմում է անտիկ հունական և լատինական սյուժեներին, ապա 19-րդ դարի հայ ողբերգությունը մշակում է հայրենի պատմագրությունը:

Այսպիսով, միանգամայն մերժելի են այն տեսակետները, ըստ որոնց հայկական կլասիցիզմը ֆրանսիականի կրկնողությունն է և այն էլ նրա ուղադառն ընդօրինակումը: Հայկական կլասիցիզմը խիստ ուղադառն գրական երևույթ է համաշխարհային գրականության մեջ:

Ձևական որոշ պայմանականություններ պահպանելով, հատկապես երկի ռացիոնալիստական, տրամաբանական կառուցվածքի և լեզվի բնագավառում, հայկական կլասիցիզմը միանգամայն ինքնուրույն էր իր էությունով: Նախ և առաջ հայկական կլասիցիզմի երկերում, ինչպես ասացինք, վերարտադրվում է հայրենի պատմագրությունը, հայ հերոսական անցյալը: Այս հանգամանքը միանգամայն բնական էր պետականությունից զուրկ և դարերի ընթացքում իր գոյության պահպանման և ազատագրության համար պայքարող հայ ժողովրդի համար:

Հայկական կլասիցիզմն ընդգրկում է բոլորովին նոր տարրեր (էպիկական, բևեռացիոն, քնարերգական), որոնք գրեթե բացակայում են ֆրանսիական կլասիցիզմի երկերում:

Ծիշտ է նկատել Դ. Վարուժանը, որ «ամեն տեղ և ամեն դար դասական գրականությունը շարտադրեր» ու հայկական կլասիցիզմի առաջացման ու զարգացման համար կային օրեկտիվ, պատմական պայմաններ:

Մարքսը 1861 թ. հունիսի 22-ին Լասսուլին գրած նամակում ասում է. «դու ապացուցեցիր, որ հռոմեական կտակի ոեցեպցիան սկզբնապես (իսկ քանի որ խնդիրը վերաբերում է իրավաբանների գիտական ըմբռնումներին, ուրեմն այժմ էլ) հիմնվում էր ոչ ճիշտ ըմբռնման վրա: Բայց

այստեղից բոլորովին չի հետևում, որ կտական իր ժամանակակից ձևով, ինչպիսին էլ լինեն հոռմեական իրավունքի, այն աղավաղումները, որոնց միջոցով ժամանակակից իրավաբաններն այդ կառուցում են, հանդիսանում է սխալ ընթացված հոռմեական կտակ: Հակառակ դեպքում կարելի էր ասել, որ յուրաքանչյուր նախնեթաց շրջանի հաջողությունը, որ յուրացնում է ավելի ուշ շրջանը, հանդիսանում է ոչ նիշտ հասկացված հնուքյուն: (Ընդգծումները Մարքսինն են): Այսպես, օրինակ, անկասկած է, որ եռմիասնությունը, այն ձևով, ինչ ձևով որ այդ տեսականորեն կառուցում էին ֆրանսիական դրամատուրգները Լուդովիկոս XIV-ի ժամանակ, հիմնվում է դրամայի ոչ ճիշտ ըմբռնման վրա (և Արիստոտելի, որպես նրա մեկնաբանողի): Բայց մյուս կողմից նույնքան անկասկած է, որ նրանք հասկանում էին հույններից և հենց այնպես, ինչպես այդ համապատասխանում էր նրանց սեփական արվեստի պահանջին և այդ պատճառով նրանք դեռ երկար ժամանակ հետևում էին այդ, այսպես կոչվող, կլասիկական դրամային, նույնիսկ այն բանից հետո, երբ 'Իսսին և ուրիշները նիշտ բացատրեցին նրանց Արիստոտելին (ընդգծումը մերն է, է. Պ.): Հայտնի է նույնպես, որ բոլոր ժամանակակից կոնստիտուցիաները մեծ չափով հիմնվում են ոչ նիշտ հասկացված անգլիական կոնստիտուցիայի վրա և փոխ են առնում որպես ինչ-որ էական հենց այն, ինչ հանդիսանում է անգլիական կոնստիտուցիայի անկման հայաանիշը և դեռ մինչև այժմ էլ գոյություն ունի Անգլիայում ձևականորեն լուր per abusum (շնորհիվ չարահաման), օրինակ, այսպես կոչվող պատասխանատու կարիքներ: Սխալ հասկացված ձևը հանդիսանում է հենց համընդհանուր ձև և հասարակության զարգացման որոշ աստիճանի վրա այն ձևը, որ հարմար է ընդհանուր կիրառման համար: (Ընդգծումները Մարքսինն են):

Կլասիցիզմն օգտագործելով նախնեթաց շրջանի հաջողությունները, այնուամենայնիվ ինքնուրույն էր, ուներ դրական պատմական բովանդակություն և հանդիսանում է կոնկրետ էպոխայի արտահայտությունը:

Կլասիցիզմի բազմաթիվ գեղարվեստական առանձնահատկություններն այսօր ևս ուսանելի են: